ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3301ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

"24" 11. 2016թ. № 01/03/1/5473-16

Ձեր՝ №

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի դիմումի, հայտնում եմ, որ համաձայն <<Տեղեկատվության ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխան՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն անձնական տվյալ է համարվում՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

Ձեր կողմից հարցմամբ պահանջվող տեղեկությունների հրապարակումը խախտում կամ կարող են խախտել անձի անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ֆինանսատնտեսագիտական բաժին
Լ-05